# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԹԵԺ ԳԻԾ - 2022թ. / հունվար- հունիս/

Նշված ժամանակահատվածում «Թեժ գիծ» հեռախոսակապով ստացված ընդհանուր հեռախոսազանգերի թիվը կազմել է մոտ 26400 զանգ: Դիմել են ոլորտին վերաբերող բազմաբնույթ հարցերով, ընթացող բարեփոխումների թեմաներով և այլն: Հեռախոսազանգերն առանձնակի շատ են եղել առաջին դասարանցիների հայտագրման թեմայով, որոնց տրվել են բանավոր պարզաբանումներ, իսկ տեխնիկական բնույթի խնդիրների դեպքում՝ ուղղորդվել են ԿՏԱԿ:

Հիմնականում հեռախոսազանգերին տրվել են հարցը պարզաբանող սպառիչ պատասխաններ:

Հունվար - հունիս ամիսներին ԿԳՄՍ նախարարության «Թեժ գիծ» հեռախոսակապով ստացվել է 86 բողոք-ահազանգ:

Հիմնական ահազանգերը հանրակրթական ոլորտին են վերաբերում՝ ապօրինի դրամահավաք, ուսուցչի կամ տնօրենի վատ վերաբերմունք, կամ անօրինական գործողություն: Բողոքները գրավոր ձևակերպվել և ուղարկվել են նախարարության համապատասխան ստորաբաժանումներ՝ ընթացք տալու:

Հասարակայնության հետ կապերի

և տեղեկատվության վարչության փորձագետ՝ Ամալյա Ավետիսյան